

էջ: Նոյնպէս, տաղանդաւոր  
ընթացք Տիար Յ. Պէղրեանին:  
Իրական պարտականութեանս  
ը կցեմ անկեղծ մաղթանք-  
տաճակներն, պէտք էր ըսէի,  
նոյնպէս յարաձուն յաջողու-  
մի, որուն մինչեւ տարեգլուխ  
տար 1) Գրական Շաբաթաթեր-  
թուն ապահով եմ:

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՃԵԱՆ

Երբզններէն մէկը մեզի զրկած  
ը Օր. Պօյաճեանին, որուն ար-  
կան յաջողութիւնները թը-  
մանքի Յրդ. Թիւն մէջ, անգ-  
էսէ մը քաղելով:

Ինչպէս այդ հաստատուք վերջու-  
նք հետեւեալ նախադասու-  
նքը կրուստագիտուհի Օր. Պօ-  
յրնայ Թերեւս գոյաթիւն աւ-  
ց ամէն պարագայի մէջ այս  
նկարագրածը չի կրնար ըլլալ

Այդտիկ կատարած մը յայտնած  
այն յօգուածագիրին նկարա-  
յաճեանին վրայ, որ կը ներ-  
ապաւելային համագամանքով մը:

Շանքի ընթերցող մը կու-  
ցանել անոր գոյաթիւնը, նոյն  
նմայելով մեզի գիտելու իր  
ատուկ նաւք ու լուրջ գիւ-

ՌԻՍԱՆՈՂՆԵՐԸ

Ինչպէս թիւով կը ներկայացնենք  
նամակի Համալսարանին Օսման-  
ներուն, որոնց մէջ կը գտնուին  
Ասանցմէ միայն Տիար Արշակ  
ճանօթ է մեզի, իր այնքան  
անձրով, «Սեւ Անտառ», Օրա-  
ամարտի մէջ հրատարակուած

Ահաւասիկ անունները:

1. Տիար Հրանդ Տանձիկեան
2. Աստֆ ձէմալ պէյ
3. Տիար Կարապետ Գուլթանեան
4. Տիար Տիմոքի Լէօնիտա
5. Մուսթաֆա Արլիք պէյ
6. Տիար Արշակ Սեղբասեան
7. Հիւսէյին Ալին պէյ
8. Հիւսէյին Պարի պէյ
9. Պէքիբ Քէմալ պէյ
10. Ահմետ Շէվքէթ պէյ
11. Խալիլ Պէնգաւտ պէյ
12. Տիար Երուսնդ Ֆէսճեան
13. Տիար Էլիբ Պարզեայի
14. Տիար Անդրանիկ Զաքարեան
15. Տիար Վահրամ Հիւսրէան
16. Տիար Հայկ Սէրէնիկեան
17. Սալիհ Զէքէ պէյ

Գ



ՕՐ. ՊՕՅԱՃԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ  
ԶՈՐԱԶԱՐԻՒԹԱՄԵԱԼԸ

Արեակ Զօպանեան Անահիտի վերջին թի-  
ւին մէջ հետեւեալ կը գրէ.

Թիֆլիզի Հորիզոնին մէջ, Լէօ գեղեցիկ  
յօգուածով մը առաջարկած էր որ գալ  
տարուան սկիզբը հայ ժողովուրդը ասնէ  
Հայկական Տպագրութեան շորհարիւրած-  
եակը, և այդ առթիւ հայ գրականու-  
թեան զարգացման մշտապէս աջակցող  
հաստատութիւն մը՝ հայ-գրական ֆօնտ  
մը՝ հիմնուի Հայկապ գաղափար, որուն  
խանդավառ համամտութիւնս կը յայտ-  
նեմ, և որուն իրականացման բարոյապէս  
պէտք է օժանդակեն անշուշտ բոլոր հայ  
մտաւորականները: Բայց եթէ այդ ֆօնտն  
ալ՝ երբ հիմնուի՝ պիտի ունենայ այնպիսի  
կանուանակութիւն մը ինչպէս Թիֆլիզի  
Հրատարակչականը... վստօ հայ գրակա-  
նութեան գլխուն:

Այդ հաւաքումներուն մէջ ուր հայ-  
կական տպագրութիւնը տօնող մտաւորա-  
կանները պիտի խորհրդակցին գրական ֆօն-  
տը կազմելու համար, երանի՜ թէ կարե-  
նան սա երկու էական հարցերուն լուծում  
մը գտնել. 1. Ինչպէս ընել որ հայ մարդը  
գրքի և լրագրի գրամ տալու վարժուի  
(էն հիմնական միջոցը՝ հայ գրականու-  
թիւնը մշտապէս ապահովելու). 2. Ինչ-  
պէս ընել որ մեր ամէն հանրային գործե-  
րուն մէջ մանաւանդ ատենէ մը ի վեր  
ցոյց արուած ահաւոր գանդաղութիւնը,  
հետեւողականութեան պակասը, անկանո-  
նութիւնը, անճշտագրութիւնը, որոնց  
երեսն մեր նշխարիկ ամենալաւ ծրագրով  
սկսած մարմիններն ու հաստատութիւն-  
ները կը կազան կամ բնաւ չեն քալեր,  
բուժում գտնեն:

Անհրաժեշտ է որ այդ մեծ ամբ աս-  
նելու և այդ առթիւ հայ գրականութեան  
զարգացումը ապահովող այսպիսի ձեռ-  
նարկ մը յաջողցնելու համար ո՛չ միայն  
առօտահայք այլև թրքահայ ու պարսկա-  
հայ հասարակութիւններէն ինչպէս և ար-  
աասահմանի կարեւոր գաղութներէն ներ-  
կայացուցիչներ գտնուին այդ համագա-



գային նշանակութիւն ունեցող հանդիսաւորութեան, արդ, ծանօթ ըլլալով մեր անհոգութիւնը, դանդաղութիւնը որուն վերեւ ակնարկեցի, դժբաղդարար շատ յոյս չունիմ որ ամէն կողմէ պատգամաւորներ երթան մասնակցիլ Կովկաս կատարուելիք հանդէսին: Շիրվանզադէի յորելեանին առթիւ թըքահայ մտաւորականութիւնը դէպ ի ուսուսհայ վարպետը իր յարգանքը շատ վայելուչ և փայլուն կերպով յայտնեց յօգուածներով, ուսումնասիրութիւններով և բանախօսութիւններով, բայց Պոլսոյ գրական հասարակութիւնը հարկ եղած փոքրիկ ճիգը չուզեց ընել պատուիրակ մը ուղարկելու համար որ երթար Կովկաս ներկայ դանուէր յորելեանին և անձամբ յայտնէր թըքահայ մտաւորականութեան մեծարանքը, հակա-

ռակ որ այդ գաղափարը սրոշապէս թելագրած էինք այս էջերուն մէջ: Այս զանցառութիւնը ես կը բացատրեմ ոչ թէ չկամուցեամբ, այլ այն համբաւաւոր դանդաղութեամբ զոր մասնանիշ ըրի իրբեւ մեր ախտերէն մին Որպէսզի այդ նշան դանդաղութիւնը արգելք չըլլայ Լէօի գաղափարին համազգային հանդիսաւորութեամբ իրագործուելուն՝ ես կ'առաջարկեմ հետեւեալը. հայկական տպագրութեան չորհարկաւորութեան տօնել յառաջիկայ կաթողիկոսական ընտրութիւններէն անմիջապէս յետոյ, այդ առթիւ արդէն իսկ աշխարհիս ամէն կողմէն մեր ազգային կեանքին մէջ մեծ նշանակութիւն ունեցող այդ հարցը լուծելու համար ազգին ըստ հատուածներուն կողմէն ընտրուած կարևոր անձնաւորութիւններ պիտի

հաւաքուին Եջմիածին, ընտրութիւնը կը կատարուի դեկտեմբերի վերջերքը, հայկական տպագրութեան չորհարկաւորութեան անոր կցելով նաև հայ տառերու գիւտին հաղար չորհարկաւորութեան կ'առաջարկեմ յառաջիկայ յունուարի սկիզբները, մասնակցութեամբ ըստ կաթողիկոսական պատուիրակներու ինչպէս և այն ըստ ուսուսհայ անձնաւորութեանց որ պիտի փափաքին մասնակցիլ, ու այն թըքահայ կամ պարսկահայ մտաւորականներուն (եթէ երբէք պատահի) որոնք պիտի ուզեն այդ տօնին երթալ մասնակցելու համար հարկ եղած «յոզնութիւնը» յանձն առնել:

ՇԱՆԹԱՐԳԵԼ